

# Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

## ՎԱՂԱՄԵՌԻԿ ՕՐԻՈՐԴԻՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՅ

### ԱՆԴՐԱՆԻԿ ԴՍՏԵՐ

## ՓԱՍՔԱԼԱՅ Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

# ԵՂԵՐԵՐԳ

ԼՌԵՍՑԷ՛ իմ դաշնակիս երգ քաղցրաձայն,
Լռեսցե՛ն և սիրածարծ երգիչք համայն,
Ցնծութեա՛ն տացեն դադար ձայնք 'ի բնութեան.
Զի հրաժեշտն հնչեաց երգս իմ ողբաձայն

Ո՜վ աշխարհ դու պարուրեալ միշտ խաբուսիկ.
Ով կենցա՛ղ և դու խոստմամբ քով փչալիթ.
Սուտ են ձեր խոստմունք առատք սուտ և նուէրք.
Չէք 'ի ձե՛զ կայուն բարեք չէք բերկրանք.

Զի՛ս յուսո՛վ լցէք աւա՛ղ և պատրանօք
Ընդունայն ինձ ծանուցիք գեղեշտալիս.
Զուարթագին փայլունութեամբք յղացուցիք,
Յորոց չէք ինչ մխիթար և յագուրդ.

Դեռաբուսիկ իմ բարունակ փափկուղէշ,
Նորաբողբոջ այս իմ հասակ նազելի
Ընդ Պարիսեան իմէ կորուց ապրաւոր
Իւր անկանելի վաղաթառամ առաւթուր:

Թառամեա՛լ թուշնիմ աւաղ տարաժամ
Որպէս շուշան ճմլեալ ընդ խիստ սմբակաւ:
Կամ զերդ ասուպ ինչ գեղեցիկ ընդ երկնաւ
Պայծառ փայլիմ և շողացեալ անյայտանամ:

Ո՜հ յուսո՛վ գորովալից ծնողք իմ ո՛չ
Սնուցին զիս և փափուկ զիս բաղձալիշտ,
Նոյն յուսով ծնեալ էր հայր իմ գթած
Ուսմանց պարապ տայր ըղձիւ իմ մանկական:

digitised by A.R.A.R.@

Լի յուսով այսպէս համայն ազգակիցք
Խայտային ընդ գեղազուարճ յիմ գարուն,
Ի ծաղկազարդ տես ու ձայնիւ պատարուն
Որ խոստանայր ըղձոյս նոցին պտղել։
Չեւ հասանէր իմ գեղադէշ փարելի
Չեւ հասեալ դեռ 'ի սահման իւր վերջին
Դեռ յարփունս, նոր զի ծանեայ արարած,
Կենդանական չեւ օրինաց լեալ հպատակ։
Դեռ Հիմէն յիմ 'ի գլուխ վեհ կուսական
Չէր վառեալ զպսակ ջահն առագաստի.
Մինչ 'ի կոյս անբիծ ճակատս իմ մանկական
Լուսափայլ շողէր շուշանն անմեղութեան.
Այլոց անփոյթ դեռ աղետից անկարգել
Անծանօթ վշտաց՝ խայտայր միշտ ընդ այլ.
Երկիցս հինգ ամաց շրջան բոլորեցի
Ահա մահն հաս սայրասուր գերանդեաւ.
Եւ հնձեցայ իբրեւ ըղհասկ դեռ անհասք.
Կամ զերդ վարդ 'ի կոկոն իւր թոշնեցայ
Ընդորում խամրիչ խորշակըն դառնաշունչ.
Եւ մեկնիմ 'ի ձէնջ առ-ս իմ մահացուք։
Մի լայք զիս ողբերգոյս իմ Ծնողք,
Մի ողբայք իմ հարազատ Ազգակնուհիք.
Զի 'ի ձէնջ այն այժմիկ զրկիմ յուսոյդ,
Այլ յանբան և բազմաղէտ փրկիմ չարեաց։
Եւ առ Յիսուս պսակողին իմ կուսութեան
Վերապանամ անմահութեանն 'ի խորան,
Զձեզ լացէք. ընթացարուք ուղղութեամբ
Զի կայք յաղէտս տակաւին աստ յերկրի.
Յինէն առ ձեզ խրատ ընտիր լիցի երկակ.
Զգուշ լերուք խոյս տուք խուսաւ 'ի փափկութեանց,
Զանձինս ձեր մի' հեշտութեանց մատնէք գերի
Եւ մի կորից լինիք գրգիռ անմտաբար։
Իմ տխուր վաղահաս մահ լիցի վկայ
Ունայնութեան կենցաղոյս սին վայելչութեանց։
Հոգեկան բարիքն են միշտ անփոփոխ
Ընձեռիչք երանութեան կրկին կենաց։
Ընտանայ զիս յիշեցէք. այս իմ աղերս.
Մատուցէք մաղթանս առ Տէր մարդասէր.
Ի հանգիստ անմահ հոգւոյս իմ յաւիտեան
Եւ ձեր եւս սրտից լիցի այն մխիթար

digitised by A.R.A.R.@